

ԴՐԱՆԻՑ ՍՏԱԼԻՆՅԱՆ 37 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՏ Է ԳԱԼԻՍ

«Քաղաքական գործընկեր ընտրելիս մենք առաջին հերթին հաշվի ենք առնելու մարդկային գործոնը եւ ընտրելու ենք այնպիսի մարդու, որի հետ փորձելու ենք առաջ շարժվել ու քիչ թե շատ դերակատարություն ստանձնել քաղաքական դաշտում: Բնական է, անչափ կարելու է նաեւ գաղափարախոսությունը, որովհետեւ այն, ինչ ծրագրում ենք, ընտրություններով չի ավարտվելու. մենք փորձում ենք լուրջ հայտ ներկայացնել, որովհետեւ ՀՈԱԿ ղեկավարների մեծ մասը երիտասարդ է (միջին տարիքը 40 է), եւ մենք մեր ծրագրերը կազմում ենք 20-25 տարվա կտրվածքով: Համագործակցության առումով մենք և գաղափարական և մարդկային ընդհանրություններ ենք տեսնում «Դաշինք» կուսակցության և նրա ղեկավար Սամվել Բաբայանի հետ», - այսպես սկսվեց մեր զրույցը ՀՈԱԿ ատենապետ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ հետ:

-Ներքաղաքական զարգացումներն ինչի՞ կարող են հանգեցնել:

-Կան քաղաքական գործիչներ, որ 15 տարի զբաղվում են քաղաքականությամբ եւ ժողովուրդն անգիր գիտի, թե որ գործիչն ինչ պիտի ասի: Եվ կարծում են՝ նոր քաղաքական մտքի անհրաժեշտություն կա: Այն ուժերը, որոնք պնդում են, թե քաղաքական դաշտում գաղափարների պակաս կա, ջուր են լցնում գործող համակարգի ջրաղացին: Մենք այդպես չենք կարծում և ներքաղաքական զարգացումները պատկերացնում ենք գաղափարների մրցակցության պրիզմայով:

- Ձեր քաղաքական ծրագրերը ինչպիսի՞ն են:

- Ուզում են նաեւ նշել, որ Թ-րդ ընտրատարածքում ես մեծամասնական ընտրակարգով պետք է պատգամավորության թեկնածու առաջադրվեմ: Ինքս ծնվել և մեծացել եմ Երևանի կենտրոնում և կուզենայի աջակցությունս ցուցաբերել Երևանցիներին, ինչպես նաև որպես կուսակցության ղեկավար իմ նպաստը բերել մեր երկրի զարգացմանը:

-Քայքայի ընտրատարածքում «հայտնի» անուններ կան:

-Չեմ կարծում, որ կան ընտրատարածքներ, որոնք սեփականաշնորհվել են: Մենք այդ մտայնությունը չունենք, մեզ համար բոլորն էլ հայ են, եւ պայքարի մեջ ենք մտնում ոչ թե թշնամիների, այլ մրցակիցների հետ, ու այդ պայքարը տանելու ենք զրազետ, գաղափարական սկզբունքի վրա: Եթե պայքարն այդպիսին լինի, դրանից կշահենք ոչ միայն մենք, այլ նաեւ հասարակությունը: Միայն ուզում եմ ավելացնել, որ անպատասխան չենք թողնելու բռիությունը, անօրինական գործողությունները, դրանք համարժեք հակահարված կստանան, իհարկե օրինականության սահմաններում:

-«Ազգ» օրաթերթը օգտագործում էր ձեր կուսակցության զինանշանը, եւ դուք պահանջեցիք, որ դա հանեն: Ինչո՞վ էր դա պայմանավորված:

-Այսօրվա դրությամբ «Ազգ» օրաթերթի հիմնադիրներից եւ ոչ մեկը ՀՈԱԿ անդամ չէ, եւ բնական է, անիմաստ էր ցուցանակի վրա մեր զինանշանը թողնելը: Մինչդեռ թերթի հիմնական բաժնետեր Արա

Աբրահամյանը հայտարարում էր, որ ոչ մեր զինանշանը, ոչ անունը չեն օգտագործում: Դե ինչ, երեւի մարդը տեղյակ չէ: Մենք նրան այդ մասին հիշեցրեցինք, եւ լուսանկարն էլ ուղարկեցինք, ու մեկ օրում զինանշանը թերթից հանվեց: Երբ այս տարի փետրվարին Աթենքում մասնակցում էի մեր կուսակցության համագումարին, շատերը նշում էին այն խայտառակ երեւոյթը, երբ մտավորականի կերպար հագած մարդիկ կատարեցին մտավորականին ոչ հարիր քայլեր՝ վաճառելով թերթը: Իսկ ինչ

վերաբերում է Արա Աբրահամյանի հետ հակամարտությանը, ապա ես դա հակամարտություն չէի համարի, որովհետեւ ինքը շատ փոքր է, որպեսզի մի ամբողջ կուսակցության հետ հակամարտի: Պարզապես ցավալի է, որ նրա անձնական օգտագործման թերթում տպագրվում են օդաչուների, փախստականների, մարզիկների նամակներ, որոնք իրենց աջակցությունն են հայտնում Ա. Աբրահամյանին: Դրանից ստալինյան 37 թվականի հոտ է գալիս, եւ երեւի վաղը-մյուս օրը թերթում կթվորուհիներ կան հանքափորներ հանդես կգան: Ինչ է հիմա էլ մենք ասենք, որ Արա Աբրահամյանը ստախո՞ս է, որ 2003-ին խոստացավ Հայաստանում 50 մլն դոլարի ներդրում կատարե՞լ, ինչպես նաեւ ամեն մարզում 5 մլն դոլարի աշխատատեղ ստեղծել: Ասեմ, որ մարդկանցից հավաքեց հազարավոր բիզնես-պլաններ, եւ մարդիկ մինչեւ օրս չգիտեն դրանց ճակատագրի մասին եւ պահանջում են, որ հետ ստանա՞լ: Լավ կլինի, որ նրան շրջապատող մանկլավիկները հանգիստ նստեն իրենց տեղում: Ես

նույնիսկ հակված եմ մտածելու, որ Ա. Աբրահամյանը տեղյակ էլ չէ ստալինյան ոճի նամակների մասին, պարզապես մանկլավիկները միմյանց միջեւ մրցում են՝ ապացուցելու, թե որքան լավ են նրան ծառայում: Կարծում եմ՝ հենց այստեղ է Ա. Աբրահամյանի դժբախտությունը, որ փողի վրա իմպերիա է ստեղծել, բայց ընկեր չունի, որն իրեն խորհուրդ տար, որ բարեգործություն անի, բայց հեռու մնա ասուլիսներից, չմտնի մի տեղ, որտեղ ասելիք չունի: Մենք մեր գործելաոճը չենք փոխելու հաջողակ խոսանչիների հանդեպ, որոնք, մի քանի կոպեկ աշխատելով, փորձում են հայ ժողովրդին դասեր տալ, թե նա ինչպես պետք է կառուցի իր ապագան: Ա. Աբրահամյանը որեւէ մեկին բարեգործություն է արել, չի նշանակում, որ դրանով իսկ իրավունք է ստացել վիրավորելու մի ողջ կուսակցության: Ինչեւիցե, թե՛ վիրավորանքի, թե՛ լավության դիմաց ստանալու են տասնապատիկը: Սա եղել է մնում է մեր գորշելաոճը:

Ռ. ԹԱԹՈՅԱՆ

Հ.Գ -Հարցազրույցը կայացել է ՀՊԱԿ ատենապետի վրա հարձակման նախորդ օրը:

ՀՊԱԿ ԱՏԵՆԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ

Ինչպես պատմում է Հարություն Առաքելյանը, խուլիգանները լուռ, առանց հայիոյելու իրեն են մոտեցել աջից եւ ձախից, դեմքը փակել են վերնազգեստով եւ փորձել են հարվածել իր դեմքին: Այդ ընթացքում խանութից դեպքի վայր են «հասել» խանութի հաճախորդներն ու աշխատողները, որոնց աղմուկից հանցագործները ճողոպրել են: Առաքելյանի դիտարկմամբ՝ նրանք չեն վնասել իրեն, այլ ընդամենը «ղզիկավարի վնասել են հագուստները»:

«Ժամանակին ես բոքս եմ պարապել եւ այդ անճոռնիները չեն իմացել դրա մասին, բայց ես նրանցից մեկին հարվածեցի, գետնին ընկավ, փորձեցի ոտքից բռնել, որ չփախչի, բայց նա հաջողացրեց», - երեկ մեզ մոտ զրույցուն մշտեց ՀՌԱԿ ատենապետը: Միաժամանակ Առաքելյանը չի հասցրել տեսնել թե նրանք ո՞ւր են փախել, բայց ականատեսները նկատել են, որ այդ երիտասարդները մի քանի ժամ առաջ դարանակալել են գրասենյակի մոտ, իսկ դեպքից հետո էլ խանութի աշխատակիցների մեկի դիտարկմամբ՝ նստել են ինչ-որ սեւ BMW եւ հեռացել: Առաքելյանի դիտարկմամբ՝ հանցագործները հիշեցրել են «անթրաշ գեղացիներ»: ՀՌԱԿ ատենապետն այս ամենը կապում է իր մասնագիտական գործունեության հետ՝ հայտարարելով, որ ինքը երբեք անձնական թշնամիներ չի ունեցել: Ավելացնենք, որ Առաքելյանը որոշել է մեծամասնական ընտրակարգով առաջադրվել Կենտրոն համայնքի պատգամավորի թեկնածու եւ մասնակցել 2007թ. խորհրդարանական ընտրություններին:

ՀՌԱԿ ատենապետը բացառում է, որ այս ամենը կազմակերպված լինի Արա Աբրահամյանի կողմից՝ ըստ նրա ստեղծված կոնֆլիկտային իրավիճակից կարող է օգտված լինել երրորդ կողմը: Ըստ այդմ՝ «ես հայիոյուն եմ հարձակվողների եւ կազմակերպիչների կանանց. մարտահրավերն ընդունված է, համեցեք», - հատուկ մամուլի համար ընդգծեց Առաքելյանը: ՀՌԱԿ ատենապետն այս միջադեպը համարում է նախազգուշացում եւ ինքն էլ իր հերթին է նախազգուշացնում կազմակերպիչներին, որ վախի զգացում ինքն ընդհանրապես չունի եւ որոշել է՝ «այլեւս հետդարձի ճամփա չկա»:

ԳՐՀԱՐ ՎԵՁԻՐՅԱՆ